հյուսության հարցերը քննվեցին Ռ. Ոսոսյանի և Ն. Մելիքյանի զեկուցումներում։ Առաջինը բայական բառակապակցությունների կառուցվածքային առանձնահատկությունները քննելիս հանգում է այն մտքին, որ նախադասության անդամների ավանդական կաղապարը որոշ սահմանափակումներ ունի, և փորձում է կիրառել ավելի լայն հնարավորություններ ունեցող լեզվաբանական կաղապարներ։ Ն. Մելիքյանը արդի հայերենի տարբեր գործառական ոճերի (գիտության լեզու, չափածո խոսք, խոսակցական լեզու) լեզվանյութի հիման վրա սահմանում է պարզ նախադասության շարադասության հիմնական գծերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով առկայական տրոհման գործոնին, ինչպես նաև տեքստի բնույթին։ Տեքստի լեզվաբանության դիրքերից Բ. Ղազարյանը ներկայացրեց հայերենի պարբերության մեջ նախընթաց անդամի ձևավորման տարբեր տիպերը, նախադասությունների միջև իմաստային ու ձևական կապերի բնույթը։

Լսվեցին նաև ընդհանուր տեսական-մեթոդաբանական և տեղեկատու բնույթի զեկուցումներ։ Վ. Մ. Գրիգորյանի զեկուցման մեջ առաջադրվում էր լեզվի կառուցվածքահամակարգային միասնության համարժեք նկարագրության պահանջը, որի համաձայն լեզուն պետք է նկարագրվի ինքնատիպության և տիպաբանական յուրահատկությունների խիստ հաշվառումով։

Ա. Սուքիասյանը գիտաժողովին ծանոթացրեց ժամանակակից հայ բառարանագրության նվաճումներին, վերջին տասնամյակներում ստեղծված բազմաբնույթ բառարանների արժանիքներին և սովետահայ բառարանագիրների առջև կանգնած կարևոր խնդիրներին։

Համառոտ կերպով բնութագրելով Երևանում կայացած հայերենագիտական միջազգային գիտաժողովի նշանակությունը՝ կարելի է ասել, որ այն ամփոփեց վերջին տարիներին հայերենագիտության ասպարեզում տարվող աշխատանքների արդյունքները, ակնհայտ դարձրեց այն փաստը, որ մեծ չափով աճել է ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան հետազոտողների գիտական հետաքրքրությունը հայերենի նկատմամբ, բացահայտեց հայագիտության հետագա առաջընթացի հեռանկարները, ցույց տվեց, որ ներկայումս հայոց լեզուն ուսումնասիրվում է իր ժամանակագրական, տարածական ու գործառական տարբերակների ամբողջությամբ՝ լեզվաբանական տարբեր դիտակարգերի և ուղղությունների հայեցակետից։

Լ. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԲՐՈՆԶԻ ԵՎ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊՐՈԳՐԵՍԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

1982 թ. հոկտեմբերի 20—24-ը Երևանում կայացավ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի մշակութային պրոգրեսին նվիրված համամիութենական սիմպոզիում, որը կազմակերպել էին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր, ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտը, ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքը, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը։ Սիմպոզիումը նվիրված էր ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին։ Մասնակիցներին ուղղված ողջույնի խոսք ասաց կազմկոմիտեի նախագահ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը։

Սիմպոզիումի առաջին նիստը նվիրված էր պատմական զարգացման ու մշակութային պրոգրեսի խնդիրներին։ Վ. Մ. Մասսոնը (Լենինգրադ) իր «Մշակութային պրոգրեսը վաղ մետաղի դարաշրջանում» զեկուցման մեջ անդրադարձավ հասարակության պրոգրեսիվ զարգացմանը, որը կապված է արտադրողական ուժերի աճի հետ առաջին հերթին այն ժամանակ, երբ ինքը պրոգրեսը ամբողջությամբ վերցրած դիտվում է որպես տիպ և զարգացման ուղղություն, նվազ կատարյալից՝ դեպի առավել կատարյալը։ Վաղ մետաղի ժամանակաշրջանում դիտվող առաջադիմության հիմքում նա տեսնում է այդ ժամանակաշրջանի էներգիայի նոր աղբյուրի՝ կենդանիների քարշող ուժի լայն օգտագործումը, արտադրողականության բարձրացումը՝ կապված մետաղագործության առաջացման հետ։ Որպես վաղ մետաղի ժամանակաշրջանի մշակութային առաջադիմության կարևորագույն գիծ նա նշեց հաղորդակցության, ինֆորմացիայի տարածման, փոխանակային առևտրի, ինչպես և նշանային հաղորդակցման ձևի զարգացման փաստը։

Գ. Ե. Արեշյանի (Երևան) զեկուցումը նվիրված էր մշակույթի և սոցիալական կազմի զարգացման հարաբերական անկախության հարցին՝ ըստ Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի բրոնզեդարյան նյութերի։

Մշակութային պրոգրեսի որոշ առանձնահատկությունների մասին էր նաև Մ. Գ. Հաջիևի (Մախաչկալա) զեկուցումը, որտեղ, Հյուսիսային Կովկասի հնագիտական նյութերի ուսումնա-

սիրության հիման վրա, խոսվեց Հյուսիսային Կովկասի մշակույթում մ. թ. ա. II հազարամյակում դիտվող լեռցման ու վայրընթացի մասին։

Հաջորդ նիստը նվիրված էր վաղ մետաղի դարաշրջանի մշակույթների զարգացմանը։ Խոսելով Հայկական լեռնաշխարհի վաղ մետաղի դարաշրջանի մշակույթների զարգացման մասին, Է. Վ. Խանդաղյանը (Երևան) ամփոփեց վերջին տարիներին Հայաստանում կատարված այդ ժամանակաշրջանին վերաբերող հնագիտական աշխատանքները՝ հանգելով հետաքրքիր եզրակացություններ, կապված քննարկվող ժամանակաշրջանի մշակույթների ու այդ մշակույթները կրողների էթնիկ պատկանելության հետ։ Նա մասնավորապես նշեց, որ Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան մշակույթը առընչվում է հնդեվրոպական ծագում ունեցող ցեղերի հետ, և որ հայասացիները, որոնց կազմավորումը որպես ժողովուրդ, ըստ Է. Վ. Խանդաղյանի, ավարտվել էր դեռևս միջին բրոնզի դարում, Հայկական էթնոսի հիմնական կրողներն են եղել։

Այնուհետև ելույթ ունեցավ Կ. Ն. Պիցխելաուրին (Թբիլիսի), որը խոսեց Կենտրոնական Անդրկովկասի ուշ բրոնզի ժամանակաշրջանի վաղ փուլի մասին։ Այս զեկուցման մեջ առանձնահատուկ ուշադրություն էր նվիրված ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի երկրորդ փուլում Կենտրոնական Անդրկովկասի որոշ շրջաններում հայտ եկած բրոնզի այն զենքերի և գործիքների ուսումնասիրությանը, որոնք իրենց զուգահեռներն են գտնում Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի համաժամանակյա կամ ավելի հին նյութերում։ Արևելքում Վրաստանում նմանատիպ զենքերը անակնկալ անհետանում են և այս տարածքի գաղութացումը կրկին շարունակվում է տեղական հողով։

Ա. Դ. Պրյախինի (Վորոշիլովգրադ) ելույթը նվիրված էր Արաշևյան հնություններին (թվագրվում են մ. թ. ա. II հազ. երկրորդ և երրորդ քառորդներով. հայտնի են Դնեպրի ձախափնյա վայրերից սկսած մինչև Անդրուրալ) և Եվրասիական անտառատափաստանի մշակութային զարգացման պրոբլեմին բրոնզի դարում։

Ս. Ա. Եսայանի և Է. Մ. Գևորգյանի (Երևան) զեկուցումը վերաբերում էր ձիաստանների զարգացումը հին Հայաստանում։ Զեկուցման ընթացքում քննարկվեցին և ստորաբաժանվեցին մ. թ. ա. XIV դար.—I հազ. սկիզբն ընկած ժամանակաշրջանով թվագրվող հայտնի ձիաստանների բոլոր տեսակները։

Երրորդ նիստում, որ նվիրված էր բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանի տնտեսության ու տեխնոլոգիայի պրոգրեսին, ուշադրավ էր Գ. Ֆ. Կորոբկովայի (Լենինգրադ) «Վաղ մետաղի դարաշրջանում արտադրության զարգացումը բարձ գործիքների փորձարարա-տրանսլյատիվ ուսումնասիրությունների լույսը ներքո» զեկուցումը։

Սիմպոզիումի չորրորդ նիստում շոշափվեցին հարցեր՝ կապված Հյուսիսային Կովկասի մշակույթների փոխառնչությունների ու մշակութային կապերի զարգացման պրոբլեմի հետ։ Կարդացված զեկուցումներում խոսվեց վաղ բրոնզի դարում Ուկրաինայի և Հյուսիսային Կովկասի մշակույթների փոխառնչությունների նշանակության մասին (Ա. Լ. Նեչիտայլո, Կիև) և Հյուսիսային Կովկասում արտադրողական տնտեսության առաջացման մասին՝ ըստ Զոխ հնավայրի ուսումնասիրության տվյալների (Խ. Ա. Ամիրխանով, Մոսկվա)։

Հինգերորդ նիստը նվիրված էր բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանների Անդրկովկասյան մշակույթների մասին եղած նոր տվյալներին։ Ա. Ս. Ջավախիշվիլու և Լ. Ի. Գլոնտիի (Թբիլիսի) ելույթը վերաբերում էր Բեգենյան մշակույթի (մ. թ. ա. III հազ. վերջ) ուշագրավ ուշարձաններից մեկի՝ Բերիկլղեների պեղումների արդյունքներին, իսկ Կ. Խ. Քուշնարյովայինը (Լենինգրադ)՝ Հարավային Կովկասի միջին բրոնզեդարյան մշակույթների առանձնացմանը, ուր հիմնականում բնութագրվեցին կարմիրբերդյան, ուանուգերլիկյան, կարմիրվանքյան մշակույթները։ Այնուհետև ելույթ ունեցավ Դ. Ա. Խատուտայշվիլին (Բաթումի), որի խոսքը Կոլխիդայում երկաթագործության առաջացման ու զարգացման մասին էր, սկսած մ. թ. ա. XIV դարից։ Օ. Մ. Ջուփարիձեն պատմեց Մառուկոպլի հնավայրի՝ վաղ բրոնզեդարյան դամբարանաբլուրների ուսումնասիրության մասին։ Ս. Գ. Դևեջյանի և Ա. Ց. Գևորգյանի (Երևան) զեկուցումը նվիրված էր Լոռի բերդի մետաղամշակությանը (մ. թ. ա. II—I հազ. սկիզբ), որտեղ մատնանշվեց գեղարվեստական մետաղագործության անընդհատ զարգացման փաստն այս տարածքում։ Ս. Գ. Հմայակյանի (Երևան) ելույթը ուրարտական արևի աստվածությունների պաշտամունքի հետ կապված որոշ մանրամասնությունների բացահայտման մի փորձ էր՝ ուշ հայկական ու բրոնզեդարյան նյութերի հիման վրա։ Ա. Դ. Փիլիպոսյանի և Լ. Ն. Բիյագովի (Երևան) զեկուցումը նվիրված էր վաղ երկաթեդարյան Հայաստանի բրոնզե զոտիների պատրաստման ավանդույթներին և այդ զոտիների կիրառական ու սեմանտիկ նշանակության բացահայտմանը։

Սիմպոզիումի վերջին նիստը Կովկասի վաղ մետաղի դարաշրջանի մշակույթներում դիտվող

նոր տվյալների մասին էր։ Է. Ս. Շարաֆուդդինովայի (Լենինգրադ) և Օ. Ռ. Դուբրովսկայայի (Վորոշիլովգրադ) զեկուցումը վերաբերում էր կիմերական պրոբլեմին և Հյուսիսմերձևեծովյան շրջանում նախասկյութական ժամանակաշրջանի դամբարանների երկու խմբերի ուսումնասիրությանը։

Հոկտեմբերի 23-ին, երեկոյան կայացավ կարդացված զեկուցումների քննարկումը. ելույթ ունեցան Բ. Բ. Պիոտրովսկին, Ն. Յա. Մերպերտը, Գ. Ֆ. Կորոբկովան և այլոք։ Եզրափակիչ խոսք ասաց Վ. Մ. Մասսոնը, որը նշեց այս գիտաժողովի կարևոր նշանակությունը հայրենական հնագիտության զարգացման ասպարեզում, ինչպես նաև կազմկոմիտեի դրական աշխատանքը գիտաժողովի կազմակերպման առումով։

Գիտաժողովի մասնակիցները այցելեցին Գառնիի, Գեղարդի, Զվարթնոցի, Էջմիածնի, Սարդարապատի, Մեծամորի և Սամիրամի հնագիտական հուշարձանները։

Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

V РЕСПУБЛИКАНСКАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ ПО ПРОБЛЕМАМ КУЛЬТУРЫ И ИСКУССТВА АРМЕНИИ

12—16 октября 1982 г. в Ереване проходила V Республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении, организованная Институтом искусств АН АрмССР в сотрудничестве с Центром арменоведческих исследований ЕрГУ. В программу конференции, посвященной 60-летию образования СССР, было включено 135 докладов, представленных учеными из 45 организаций Москвы, Ленинграда, Киева, Львова, Ивано-Франковска, Симферополя, Феодосии, Тбилиси, Баку и Еревана. Кроме докладов, читавшихся на заседаниях шести секций, в программу конференции вошли поездки по архитектурным памятникам средневековой Армении. Открывая конференцию, заместитель директора Института искусств кандидат искусствоведения Г. Ш. Геодакян отметил значение подобных мероприятий, способствующих углубленному изучению целого ряда проблем культурного наследия и современного художественного процесса Армении, рассматриваемых во взаимосвязи с искусством братских народов СССР, стран и народов Переднего Востока.

На первом пленарном заседании был заслушан ряд докладов, затрагивающих различные области знания. Выступление академика АН АрмССР С. Т. Еремяна «История Армении» Мовсеса Хоренаци (к 1500-летию)» было посвящено феномену создания первой «системной» истории страны с древнейших времен до середины V в. В докладе доктора филологических наук В. М. Григоряна и кандидата архитектуры С. С. Мнацаканяна «Проблемы изучения монументального искусства и архитектуры Армении в контексте использования компьютерных систем» была представлена новая информационно-поисковая система, предназначенная для применения в деле охраны памятников и компьютерной каталогизации как архитектурно-художественных данных, так и посвященных им литературных источников. Доклад члена-корреспондента АН АрмССР Г. Х. Саркисяна «Эллинистическая культура и Армения» касался хронологических особенностей проникновения эллинизма, особенностей его развития в Армении в послеэллинистический период и связанных с этим проблем эволюции стиля памятников того времени. В докладе доктора архитектуры Л. Г. Мамиконова (Баку) «Гармония зодчества с ландшафтом и архитектурной средой у народов феодального Закавказья» рассматривались проблемы взаимосвязи композиционных доминант и абриса существующего ландшафта в гармоничном сочетании с деталями застройки ряда городов и архитектурных ансамблей Армении, Грузии и Азербайджана. Доклад искусствоведа А. А. Каменского (Москва) «О национальных основах раннего творчества (1903—1909 гг.) Мартироса Сарьяна» был посвящен дифференцированию национальных и традиционно-ориентальных составляющих в ранних произведениях М. С. Сарьяна. В докладе кандидата искусствоведения М. А. Айвазян «Армянская советская монументальная скульптура за 60 лет» рассмотрен большой путь, пройденный армянскими скульпторами за годы, прошедшие со дня образования СССР.